Հաստատված է

«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ

խորհրդի թիվ ____ նիստով

խորհրդի նախագահ՝

Բ. Ասատրյան

«29» __05__ 2014թ.

# ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԿԱԽ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույնով սահմանվում են <<ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ ՈւՎԿ ) կողմից գրավի առարկա հանդիսացող գույքի անկախ մասնագիտացված գնահատողի (այսուհետ՝ Գնահատող) ընտրության չափանիշները:

## 2. Գնահատողի ընտրության և հաստատման կարգը

2.1 ՈւՎԿ-ի Գնահատողի ընտրության գործընթացը հաստատվում է ՈւՎԿ-ի գործադիր տնօրենի կողմից:

2.3 Գնահատողների հետ համագործակցության պայմանագրերը կնքվում են անորոշ ժամկետով, անհրաժեշտության դեպքում՝ վերանայելու պայմանով:

## 3. Գնահատողի ընտրության չափանիշները

3.1 Գնահատողը պետք է բավարարի ներքոնշյալ պայմաններին.

- օրենսդրությամբ սահմանված դեպքերում ունենա ՀՀ կողմից տրամադրված՝ համապատասխան գործունեություն իրականացնելու թույլտվություն (լիցենզիա)՝ համապատասխան տարածաշրջաններում նշված գործունեության իրականացման համար,

- բավարարի ՀՀ օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, ՈւՎԿ-ի ներքին իրավական ակտերի պահանջներին, իսկ անշարժ գույքի գնահատողը, բացի վերոնշյալից, պետք է բավարարի նաև անշարժ գույքի գնահատողների կողմից պարտադիր կիրառման ենթակա գնահատման ստանդարտների և վարքագծի հիման վրա ՀՀ -ում Կառավարության կողմից սահմանված անշարժ գույքի գնահատման ստանդարտին և գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջներին:

## 4. Եզրափակիչ դրույթներ

4.1 Սույն Ակտը հաստատվում է ՈւՎԿ-ի խորհրդի կողմից:

4.2 Սույն Ակտում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ՈւՎԿ-ի խորհրդի որոշմամբ: